փորող) արմատակեր կնճիթները: Իր երեսի եւ դէմքի պատկերն եւս փոխուել էր, նմանում էր եղեգնուտներում ապրող խոզերի պատկերին եւ կնճիթին: Թագաւորական բարձր շուքից ընկած, գաղանների բնութիւն եւ վարք առած՝ այս ու այն կողմ էր շրջում՝ անասունների նման: Շրջում էր գաղանների մէջ եղեգնուտներում, կոբսուած–հեռացած՝ մարդկանց շրջապատից.... Խոզի կերպարանքով՝ թագաւորը բարձր ճչում էր շարունակ, զնչում էր, մռնչում եւ փրփրած՝ չողիք վազցնում բերնից: Կնճթակերպ երեսի խորշոմները հաւաքում էր, չորքոտանի կենդանու նմանութիւն առնում եւ զնում մտնում գաղանների վոհմակների բնակած եղեգնուտը»:

Այս լեգենդի վերջաւորութիւնը հետեւեալն է.—

Խոսրովիդուխտի երդից յետոյ երբ Ս. Գրիգորին խոր վիրապից դուրս են բերում, երբ Տրդատ ու բոլոր պալատականները ու ժողովուրդը դարձի դալու են պատրաստւում, եւ «թագաւորը մինչ ժողովուրդի մէջ էր կեցած այդ բոպէին, խոզի կերպարանքով, յանկարծակի՝ դո՛ղ է դալիս վրան. խոզի խորխը (մորթին) մարմնի վրայից ընկնում է, ժանտատեսիլ ժանիքներով եւ կնճթադէմ երեսով հանդերձ: Խոզի մաղերով ծածկուած իր թաւ կաշին եւս մէկ կողմ է նետւում: Այդ բանից յետոյ, թագաւորի դէմքը իր բուն տեսքն է առնում, իսկ մարմինը փափկանում եւ մատղաշանում, ինչպէս նոր ծնուած մի մանկան մարմին: Եւ ամբողջ մարմնով բժշկւում է կատարելապէս» (էջ 449):

* * *

Գրիգոր Լուսաւորչի դէմքն ու կեանքը եւս Ագաթանգեղոսի քով պատուած են լեգենդական գծերով: Այդպէս է օրինակ Խոր վիրապի պատմութիւնը, ուր Գրիգոր մնացել է, ըստ Ագաթանգեղոսի, տասներեք տարի (էջ 80, 82): Այդ թիւը ուրիշ տեղեր (էջ 131, 137 եւայլն) բարձրանում է տասնհինգ տարուան: Այդքան տարիներ ահա ապրել է նա վիրապում՝ «օձերի մէջ»: Ամենեւին չի վախեցել օձերից. օձերը մինչեւ իսկ չեն մօտեցել նրան:

Բուն լեգենդա է նաեւ այրի կնոջ նկանակի պատմութիւնը: «Այն տասներեք տարին, որ Գրիգորիոս արդելարանում էր գտնուում, խոր վիրապում, մի այրի կին, որ ապրում էր նոյն այդ բերդում, սովորութիւն ունէր՝ ամէն օր մի նկանակ թխելու եւ տանելու խոր վիրապ դցելու, որով եւ կերակրւում էր նա (Գրիգորիոս), Աստուծոյ հրամանով, բոլոր այն տարիները, որ անցկացրեց այնտեղ... Իսկ ամէն ուրիշ մարդիկ, որ իջեցուել էին այնտեղ, ամէնն էլ մեռել էին տեղի դժնդակ եւ չարաշունչ ահռելիութեան, սոսկալի տիղմի, օձախառն բնակութեան եւ սատիկ խորութեան պատճառով: Բուն չարագործների համար էր շինուած այդ տեղը, ամբողջ Հայաստանի մահապարտների սպանութեան համար»:

Լեգենդական է ի հարկէ նաեւ Խոսրովիդուխտի երազը, ինչպէս եւ Հռիփսիմեան կոյսերի անուանց շուրջը հիւսուած պատմութեանց մեծ մասը: Նոյնը նաեւ Էջմիածնի տաճարի մասին եղած զրոյցը:

* * *

Հայոց հեթանոսական կրօնի գլխաւոր կենտրոններն են եղած, ըստ Ագաթանգեղոսի, հետեւեալ վայրերը. Երէզ կամ Երիզայ աւան՝ Եկեղեաց դաւառում, ուր գտնւում էր Անահիտ դիցուհու մեհեանը: «Փառք ազգիս մերոյ եւ կեցուցիչ: Մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան եւ ծընունդ մեծին Արամազդայ» (էջ 41),— այսպէս է բնորոշւում «մեծ տիկին» Անահիտին՝ Տրդատ թագաւորը, «որով կեայ եւ զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց» (էջ 48), որի, Անահիտ տիկնոջ, խնամակալութեան (պաշտպանութեան) տակ է գտնւում «ամենայն Հայոց աշխարհս»: Անահիտի մի ուրիշ մեհեանը գտնւում էր Աշտիշատում, «Ոսկեմօր ոսկեծին դից» մեհեանը «եւ բազինն իսկ յայս անուանեալ՝ Ոսկիհատ Ոսկիամօր դիցն»:

Նոյն Աշտիշատում էին գտնւում նաեւ երկու ուրիշ մեհեաններ. «առաջին մեհեանն Վահէ Վահեան. մեհեանն մեծադանձ, լի ոսկով եւ արծաթով եւ բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ, ութերորդ պաշտօն հռչակեալ, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի յաշտից (զոհաբերութեանց) տեղիք թագաւորացն Հայոց մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ ի վերայ գետոյն Եփրատայ, որ հան-